Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԻՌԼԱՆԴԻԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Ժաննա Անդրեասյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, ք. Լոնդոն, 20-22 մայիսի, 2024 թվական

4. Հրավիրող կողմը

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կրթության վարչություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Կրթության համաշխարհային համաժողովին

6. Քննարկված թեմաները

Մասնակցություն Կրթության համաշխարհային համաժողովի աշխատանքներին

Հանդիպում Լոնդոնի համալսարանական քոլեջի ներկայացուցիչների հետ

Ակադեմիական քաղաքի Կրթական կլաստերի ձևավորման նպատակով համագործակցության զարգացման հնարավորության հարցի քննարկում:

7. *Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը*

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն կատարած այցի շրջանակում մասնակցել եմ Կրթության համաշխարհային համաժողովին, որն յուրաքանչյուր տարի համախմբում է կրթության նախարարներին, նրանց տեղակալներին, խորհրդատուներին և պատվիրակություններին ամբողջ աշխարհից՝ քննարկելու ոլորտային հիմնական խնդիրները, մարտահրավերները և ներկայացնելու դրանց լուծման հնարավորությունները, փոխանակելու կրթության ոլորտում ձեռքբերված փորձն ու ուսուցման մոտեցումները: Համաշխարհային կրթական համաժողովին այս տարի

մասնակցում էին աշխարհի 114 երկրների շուրջ 120 ոլորտային նախարարներ, քննարկումների առանցքն էր «Խրախուսելով արհեստական բանականության ըմբռնումը, ստեղծելով մարդկային հարաբերություններ, ճկունություն և արագացնելով կլիմային ուղղված գործողությունները»:

Լոնդոնում ընթացող Կրթության համաշխարհային համաժողովի շրջանակում հանդես եմ եկել զեկույցով՝ ներկայացնելով ՀՀ կրթական համակարգի բարեփոխումներն ու գրանցված արդյունքները, նշելով, որ անընդհատ փոփոխվող աշխարհում կրթության դերը և ազդեցությունը մնում են անկրկնելի՝ որպես կայուն զարգացման և ներառական աճի հիմնաքար, իմ զեկույցում ներկայացրել եմ ՀՀ կրթության՝ մինչև 2030թ. զարգացման պետական ծրագրի առաջնահերթությունները:

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն կատարած այցի շրջանակում հանդիպել եմ Լոնդոնի համալսարանական քոլեջի ներկայացուցիչների հետ, մասնակցել մի շարք թեմատիկ նստաշրջանների:

Հանդիպմանը քննարկվել են «Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակում հնարավոր համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր, մասնավորապես՝ Լոնդոնի համալսարանական քոլեջի ներկայացուցիչների՝ Կրթական կլաստերի դիզայնի կոնցեպտի մշակման հետ կապված աշխատանքներում մասնակցություն ունենալու վերաբերյալ: Այդ համատեքստում կայացել է արդյունավետ քննարկում, և բրիտանական կողմը համատեղ աշխատելու պատրաստակամություն է հայտնել:

Լոնդոն կատարած այցի շրջանակում այցելել եմ Բրիտանական թանգարան և հանդիպել տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Մարկ Ջոնսին: Հանդիպման ընթացքում քննարկվել են սեպտեմբերին Հայաստանի պատմության թանգարանում նախատեսվող «Մայր աստվածություն. Անահիտից Մարիամ» խորագրով համատեղ միջազգային ցուցադրության կազմակերպմանը վերաբերող հարցերը: Այցելել եմ նաև Մեծ Բրիտանիայի ազգային գրադարան, որտեղ հաջորդ տարի նախատեսվում է կազմակերպել հայ-բրիտանական կապերին նվիրված ցուցահանդես:

Հանդիպմանը մասնակցել են բրիտանական գրադարանի միջազգային գրասենյակի ղեկավար Մարսի Հոփքինդսը, Միջազգային ներգրավվածության կառավարիչ Էլեոնոր Կուպերը, Ասիական և Աֆրիկյան հավաքածուների ղեկավար Լուիզա

Մենգոնին, Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիայի հավաքածուների ղեկավար Մայքլ Էդմանը:
Կարևորելով նմանօրինակ ցուցադրությունների անցկացումը՝ ընդգծել եմ զուգահեռաբար դասախոսություններ և այլ միջոցառումներ կազմակերպելու կարևորությունն ինչպես Հայաստանում, այնպես էլ Մեծ Բրիտանիայում և պատրաստակամություն եմ հայտնել աջակցելու Մեծ Բրիտանիայի ազգային գրադարանում հաջորդ տարի անցկացվելիք ցուցահանդեսը Հայաստանում ևս կազմակերպելու հարցում:
Հանդիպման ընթացքում նաև կարևորել եմ բրիտանական գրադարանում պահվող հայկական հարուստ ժառանգության՝ ձեռագրերի, քարտեզների և ամենատարբեր նյութերի գույքագրումը, քարտեզագրումն ու ամբողջացումը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթեր

Պայմանավորվածություն է ձեռք բերվել համագործակցության հիմնական ուղղությունների շուրջ, որոնք ներառում են Ակադեմիական քաղաքի Կրթական համալսարան կլաստերի մշակման, ինչպես նաև խոշորացված համալսարանների կառավարիչների վերապատրաստման հարցերը: Հանդիպմանը քննարկվել է նաև բուն իրականացման գործընթացը, քանի որ Լոնդոնի համալսարանական քոլեջն անցել է խոշորացման գործընթաց, որին միավորվել են տարբեր հաստատություններ և հենց Կրթական ինստիտուտը: Նշվել է, որ բրիտանական կողմը կկիսվի իր փորձառությամբ և պրակտիկ գիտելիքներով՝ ինչպես իրականացնել այդ գործընթացը:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.
Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ Լոնդոնի համալսարանական քոլեջի ներկայացուցիչներն առաջիկայում կժամանեն Հայաստան, որի ընթացքում էլ կստորագրվի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և

Լոնդոնի համալսարանական քոլեջի միջև համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիր (վերջնականացման փուլում է):

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Ժաննա Անդրեասյան

5/27/2024

X

27.05.2024թ.

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ ԿԳՄՍՆ

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ՎՈ 360-Ա

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)
Ժաննա Անդրեասյան՝ նախարար

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը՝ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն (Լոնդոն)

5. Գործուղման ժամկետները՝ 2024թ. մայիսի 20-22-ը

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝ գիշերավարձի ծախսը կատարվելու է Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակի կողմից:

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը (ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☐

ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐

բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

					(հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը				
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	***28210***			***28.210***
Գիշերա-վարձ	Վճարը 1 օրվա համար (դոլար)				
	Վճարը 1 օրվա համար (դրամ)				
	Օրերի քանակը				
	Ընդամենը (դրամ)				
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (դոլար)	130			130
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	50386			50.386
	Օրերի քանակը	2			2
	Ընդամենը (դրամ)	***100771***			***100.771***
Այլ ծախսեր	Հակահամաճա-րակային նմուշառումների				
	Մուտքի արտոնագրի վճար				
	Այլ ծախսեր (նկարագրել)				
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		***128.981***			***128.981***

<u>Ծանոթություն:</u> Նախնական վճարվել է 0 << դրամ, ենթակա է վճարման 128981 << դրամ:

ԿԳՄՍՆ գլխավոր քարտուղար՝ **ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ**